# ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
# ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՆՑՈՒՄ
# ԳՐԱՆՑՄԱՆ/ՓՈՓՈԽՄԱՆ/ՉԵՂԱՐԿՄԱՆ ՁԵՎ

Անկանխիկ փոխանցման հնարավորությունը ընտրելու, փոփոխելու կամ չեղարկելու համար՝ խնդրում ենք կարդալ կից ցուցումները եւ լրացնել պահանջվող ողջ տեղեկատվությունը: Գրանցման յուրաքանչուր գործողության համար անհրաժեշտ է լրացնել առանձին ձեւ:
Դուք իրավունք չունեք ստանալ անկանխիկ փոխանցում, եթե ուղարկեք ձեր բանկում ավանդադրված 100% դրամական միջոցները ԱՄՆ-ից դուրս գտնվող այլ բանկի:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՏՊԵԼ ՀՍՏԱԿ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ ԳՆԴԻԿԱՅԻՆ ԾԱՅՐՈՎ ԳՐԻՉ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ

1. ☐ ՆՈՐ
2. ☐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
3. ☐ ՉԵՂԱՐԿՈՒՄ

( ԼՐԱՑՎՈՒՄ Է ՍՏԱՑՈՂԻ/ ԽՆԱՄԱԿԱԼԻ/ ՊԱՇՏՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՂՄԻՑՍՏԱՑՈՂԻ/ԽՆԱՄԱԿԱԼԻ/ՊԱՇՏՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ)

| | | | |
|---|---|---|---|
| Ա. ՍՏԱՑՈՂԻ ԹԻՎ ☐☐☐☐☐☐☐☐☐☐ | | | |
| Բ. ՎՃԱՐՎՈՂԻ ԱՆՈՒՆ (ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ) | | ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ ( ) | |
| ՀԱՍՑԵ (ՓՈՂՈՑ, ՆՐԲԱՆՑՔ, ՓՈՍՏԱՅԻՆ ԱՐԿՂ) | ՔԱՂԱՔ | ՆԱՀԱՆԳ | ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈԴ |
| Գ. ԽՆԱՄԱԿԱԼԻ ԱՆՈՒՆ (ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ) | | ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ ( ) | |
| ՀԱՍՑԵ( ՓՈՂՈՑ, ՆՐԲԱՆՑՔ, ՓՈՍՏԱՅԻՆ ԱՐԿՂ) | ՔԱՂԱՔ | ՆԱՀԱՆԳ | ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈԴ |
| Դ. ՎՃԱՐՎՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԹԻՎ ☐☐☐ ☐☐ ☐☐☐☐ | Ե. ԱՎԱՆԴԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՏԵՍԱԿ (ԸՆՏՐԵԼ) ☐ ընթացիկ ☐ խնայողական | | |
| Զ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՍՑԵ | Է. ՌՈՒՏԻՆԳԻ ԹԻՎ ☐☐☐☐☐☐☐☐☐ | | |
| Ը. ԱՎԱՆԴԱՅԻՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐ ☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐ | | | |
| Թ. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՐ | | | |

Ժ. ՆՇԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԱՆԴԱԿԸ

☐ Սույնով լիազորում եմ Վարչաշրջանի բարեկեցության գրասենյակին՝ իմ ամսական նախավճարները ուղարկել անկանխիկ փոխանցումով:
☐ Սույնով լիազորում եմ Վարչաշրջանի բարեկեցության գրասենյակին՝ փոխել իմ անկանխիկ փոխանցման հնարավորությունը:
☐ Սույնով չեղարկում եմ անկանխիկ փոխանցման իմ լիազորության տրամադրումը:

| | |
|---|---|
| ԺԱ. ՎՃԱՐՎՈՂԻ/ԽՆԱՄԱԿԱԼԻ/ ՊԱՇՏՊԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԱՄՍԱԹԻՎ |

Սպիտակ - Վարչաշրջանի օրինակ Դեղին - Վճարվողի օրինակ

# ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
# IHSS-Ի ԾՐԱԳԻՐ

## Հարգելի IHSS-ի ստացող

Սոցիալական ծառայությունների պետական դեպարտամենտը (SDSS) Տնային աջակցության ծառայությունների (IHSS) Ձեր ամսական նախավճարի օրդերի փոստով ուղարկմանը որպես այլընտրանքային մեթոդ է առաջարկում Ձեր նախավճարի էլեկտրոնային փոխանցում Ձեր կողմից ընտրված որեւէ ֆինանսական հաստատության (բանկ՝ խնայողական կամ փոխառության, կամ վարկային միավորում): Էլեկտրոնային դրական փոխանցմամբ (EFT) անկանխիկ ավանդադրումը օրենքով թույլատրվում է միայն այդ ֆինանսական հաստատություններին: Անկանխիկ փոխանցումը կամընտրական է: Եթե որոշեք շարունակել ստանալ Ձեր նախավճարը փոստով, <u>ապա կարիք չկա, որ լրացնեք կից ձեւը կամ որեւէ այլ գործողություն ձեռնարկեք:</u>

### Ի՞ՆՉ Է ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ EFT-Ի ՄԻՋՈՑՈՎ

EFT-ի միջոցով անկանխիկ փոխանցման ժամանակ Ձեր նախավճարը էլեկտրոնային կերպով փոխանցվում է Ձեր ընտրած ֆինանսական հաստատությանը: Դուք փոստով օրդեր չեք ստանա: Դրա փոխարեն, ամեն ամիս կստանաք փոխանցման ստացական՝ Նահանգային վերահսկման գրասենյակի կողմից, որը պարունակում է տեղեկատվություն Ձեր անկանխիկ փոխանցման եւ հարկային պահումների մասին: Մինչ Դուք կստանաք փոխանցման ստացականը, Ձեր վճարն արդեն փոխանցված կլինի Ձեր հաշվին: Սրա շնորհիվ Դուք ստիպված չեք լինի բանկ այցելել:

### Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՍՏԱՆԱԼ ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Անկանխիկ փոխանցում կարող է ստանալ այն անձը, որին տրամադրվել է IHSS մեկ տարվա ընթացքում, ստացել է նախավճար, ինչպես նաեւ վարձել եւ վճարել է իր ծառայություն տրամադրողներին:

Անկանխիկ փոխանցում չի կարող ստանալ այն անձը, որն իր բանկում ավանդադրված 100% դրամական միջոցներն ուղարկի ԱՄՆ-ից դուրս գտնվող այլ բանկի:

## <u>ԳՐԱՆՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ</u>

*** ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՈՒՇԱԴԻՐ ***

### Ե՞ՐԲ ՊԵՏՔ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՄԱՆ SOC 404 ՁԵՎԸ
Անկանխիկ փոխանցում ստանալու համար լրացրեք կից ձեւի (SOC 404), «Գործողության տեսակ» բաժինը, ինչպես նաեւ Ա-ից մինչեւ ԺԱ հատվածները:

1. Որպեսզի գրանցվեք՝ որպես անկանխիկ փոխանցման նոր ստացող:
2. Որպեսզի փոխեք անկանխիկ փոխանցումը ընթացիկ հաշվից խնայողական հաշվի կամ հակառակը:
3. Որպեսզի փոխեք անկանխիկ փոխանցումը մի ֆինանսական հաստատությունից մեկ այլի:
4. Որպեսզի փոխեք փոխանցման հաշվեհամարը նույն ֆինանսական հաստատության ներսում:
5. Որպեսզի չեղարկեք անկանխիկ փոխանցումը:

### Ե՞ՐԲ Է ԻՄ ՀԱՇՎԻՆ ՈՒՂԱՐԿՎԵԼՈՒ ԻՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Առաջին գործարքը կարող է կատարվել Վարչաշրջանի բարեկեցության գրասենյակի կողմից Ձեր խնդրանքն ստանալուց հետո 60-ից 90 օրվա ընթացքում: Փոխանցում կատարվում է ամսվա առաջին օրը, եթե դա ոչ աշխատանքային օր չէ. այլապես այն ուղարկվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը:

<u>ԵԹԵ ՈՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԱՌԱՋԱՆԱՆ՝ ԿԱՊՎԱԾ ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ԱՊԱ ԴԱ ԿԱՐՈՂ Է ՀԵՏԱՁԳԵԼ ԳՈՒՄԱՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ 14 ՕՐ</u>

*ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԵՏԵՎԻ ԷՋՈՒՄ*

**ԳՐԱՆՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

1. Անկանխիկ փոխանցում ստանալու համար լրացրեք կից ձեւի (SOC 404), «Գործողության տեսակ» բաժինը, ինչպես նաեւ Ա-ից մինչեւ ԺԱ հատվածները:

2. Պահանջվող յուրաքանչյուր գործողության տեսակի համար անհրաժեշտ է լրացնել առանձին ձեւ:

**Օրինակ 1**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՉԵԿ ԹԻՎ. 4444
ՔԱՂԱՔ, ԱՄՆ

ՎՃԱՐԵԼ ՀԱՇՎԻՆ______________________________

I.112145678 I: 5765432109812 44441

Ռուտինգի թիվ | Ավանդ. հաշվեհ. | Չեկի թիվ

**Օրինակ 2**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՉԵԿ ԹԻՎ. 4444
ՔԱՂԱՔ, ԱՄՆ

ՎՃԱՐԵԼ ՀԱՇՎԻՆ ____________________________

I.112145678 I.4444 8765432109812

Ռուտինգի թիվ | Չեկի թիվ | Ավանդ. հաշվեհ.

3. Ձեր ավանդային հաշվեհամարը եւ ռուտինգի թիվը ճշտեք Ձեր ֆինանսական հաստատությունում:

4. Ձեր անվավեր չեկը կցեք գրանցման ձեւի սպիտակ օրինակի ետեւի վերին ձախ մասում, եթե ձեր գումարը ավանդադրում եք ձեր ընթացիկ հաշվում: Դա կօգնի ստուգել ձեր ավանդային հաշվեհամարը եւ ռուտինգի թիվը:

5. Խնայողական հաշվի դեպքում՝ ճշգրտեք ձեր ռուտինգի համարը եւ ավանդային հաշվեհամարը ձեր ֆինանսական հաստատությունում:

**ԼՐԱՑՎԱԾ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎԻ ՍՊԻՏԱԿ ՕՐԻՆԱԿԸ ՈՒՂԱՐԿԵՔ ՁԵՐ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ, ԻՍԿ ԴԵՂԻՆ ՕՐԻՆԱԿԸ ՊԱՀԵՔ ՁԵԶ ՀԱՄԱՐ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՎԱՆԴԱՅԻՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԻ ՓՈԽՈՒՄԸ**

Ձեր անկանխիկ փոխանցումը կուղարկվի Ձեր ֆինանսական հաստատության նշված հաշվեհամարին այնքան ժամանակ, մինչեւ Վարչաշրջանի բարեկեցության գրասենյակը տեղեկացվի այն մասին, որ ցանկանում եք փոխել Ձեր հաշվեհամարը եւ/կամ ֆինանսական հաստատությունը: Փոփոխությունը կատարելու համար, լրացրեք եւ ուղարկեք նոր գրանցման ձեւ՝ նոր տեղեկատվությամբ:

**ՄԻ՛ ՓԱԿԵՔ ՁԵՐ ՀԻՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐԸ ՄԻՆՉԵՎ ՁԵՐ ԱՌԱՋԻՆ ՎՃԱՐՈՒՄԸ ՉՓՈԽԱՆՑՎԻ ՁԵՐ ՆՈՐ ՆՇՎԱԾ ՀԱՇՎԵՀԱՄԱՐԻՆ ԵՎ/ԿԱՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ**

**ՉԵՂԱՐԿՈՒՄ**

Սույն լիազորմամբ ներկայացված համաձայնությունը մնում է վավեր այնքան ժամանակ, մինչեւ Դուք չեղարկեք այն՝ Վարչաշրջանի բարեկեցության գրասենյակին ուղղված գրավոր ծանուցմամբ: Ձեր մահվան կամ իրավական անկարողության դեպքում՝ Ձեր ունեցվածքի վստահված գործակալը պատասխանատու է գրավոր ծանուցել Վարչաշրջանի բարեկեցության գրասենյակին: Դուք կամ ձեր ունեցվածքի վստահված գործակալը պատասխանատու եք տեղեկացնել ֆինանսական հաստատությանը լիազորության չեղարկման մասին: Եթե զրկվեք նախավճար ստանալու իրավունքից, ապա Ձեր անկանխիկ փոխանցման իրավունքը անմիջապես կչեղարկվի: